ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵՐԳԵՐ

Եկատերինե II կայսրուհու 14 նոյեմբերի 1779 թվականի Նոր Նախիջևանի հայության տված հրովարտակի երրորդ կետի համաձայն նախիջևանցիք պետք է ազատ մընային զինվորական ծառայությունից։

Սակայն 1874 թվականին նախիջևանցիները ևս ենթարկվեցին զինվորական ծառայության օրենքին։ Նախիջևանցիները շատ անբավական էին դրանից, դիմումներ արին կաթողիկոսին, կառավարությանը, որ Եկատերինե երկրորդի արտոնագրի համաձայն ազատեն նրանց այդ պարտավորությունից, սակայն ամեն ինչ եղավ անօգուտ։ Սպիտակ հացի և անուշեղենների սովոր հայերը զարհուրած էին, որ իրենց պետք է կերակրեն «ադրիշ» հացով և «թթու բորշչով»։ Այդ առթիվ հորինված է հետևյալ երգը, որ մինչև օրս էլ երգվում է.

1

Քրսան մեգս գոխեցի,
Հորս-մորս լացուցի։
Օ՞ֆ-օ՞ֆ-օ՞ֆ, մարիգս,
Քսան մեգ էր գարիքս։

Դավարի բես քշեցին,
Օշխարի բես պաժնեցին։
Օ՞ֆ-օ՞ֆ-օ՞ֆ, մարիգս,
Ջկար մեզի ազագում։

Դարին ստանոր խոթեցին,
Լանքերս, լոյերս չափեցին։
Օ՞ֆ-օ՞ֆ-օ՞ֆ, մարիգս,
Քսան մեգ էր գարիքս։

Հայի չեքմենս հանեցին,
Սալդաթի շինել հաքուցին։
Օ՞ֆ-օ՞ֆ-օ՞ֆ, մարիգս,
Քսան մեգ էր գարիքս։

Հոսի գոշիգս հանեցին,
Սալդաթի գոշիդ հաքուցին։
Օ՞ֆ-օ՞ֆ-օ՞ֆ, մարիգս,
Քսան մեգ էր գարիքս։

Հոսի կառտոզս հանեցին,
Սալդաթի կառտոզ հագուցին։
Օ՞ֆ-օ՞ֆ-օ՞ֆ, մարիգս,
Քսան մեգ էր գարիքս։

Թութու բոռշչով արիշ հաց,
Ե՞ր բիդ մոռնամ ջերմագ հաց։
Օ՞ֆ-օ՞ֆ-օ՞ֆ, մարիգս,
Ջկար մեզի ազազում։

Մեզի զռանից ջամփեցին,
Թուրքին զեմը շարեցին։
Օ՞ֆ-օ՞ֆ-օ՞ֆ, մարիգս,
Ջկար մեզի ազագում[1]։

ՌԱՍՏԱԿԵՍԻՆ ԵՐԳԸ

1898 թվականի ամառը զինվորական ծառայության մեջ Ախալցխայում մեռել է Թոփտի գյուղի բնակիչ երիտասարդ Արիստակես Բաղդասարի Քարտաշյանը։ Նրա ընկերները, նույնպես թոփտեցիներ, խորը ազդված այդ դժբախտ դեպքից Ախալցխայից ուղարկել են նրա մորը և եղբայրներին հետևյալ երգը, որը մինչև վերջերս էլ երգում էին «Դու չես հավատում» երգի եղանակով։

2

Մայրիդ, իմ մայրիգ, դիս առին դարին,
Դարին Տեհնի պոլկ, անունս կրեցին,
Օխտնում ոոտի մեջ ինձի հայդնեցին.
Շորերս առին, զինվոր տառծուցին,
Հրացանն ինձի զին անվանեցին,

1 Այս երգի նոտագրված տարբերակները տե՛ս սույն գրքում Մ. Լյուլեճյանի ժողովածուն։

Մեզ ռուս ուսուցչի ինձի հանձնեցին.
Նա շատ խստությամբ ինձ հեղ վարվեց,
Իսկ և այն օրից սիրտս խոցոտեց,
Չի ցավ ստացա, որ մահ բաղձաուեց,
Իմ ծնողներիցս ինձի պաժանեց.
Ցավի դիրացա, հիվանդանոց ընդա,
Ջարևրուն ֆոդևն ես ուժևս դրդվեցա,
Ընդեր դանչելով, ևս ձայնով խոդաձ.
Դասն և հինդ օրվա մեջ ոտքևս բրրձա,
Ընդեր դանչելով ևս տան չբսաացա։

Դարին դիս, դարին, բաղաքևն հանեցին,
Ախուլցխային բովը ինձի թաղեցին,
Հայ գերդեզներով թաղումս արին։
Պարև գնցիք, ախ իմ ձնողներ,
Տուք ողջ մնացեք, սիրուն ընդերներ,
Որ տուք դուն կնաք, իմ մասին բադմեք,
Նոր Նախիջևան, մայրենի քաղաք.
Տուք մնաք տարով, ևս մնամ դարով,
Մայրս, եղբայրս, տուք մխիթարվիք։

1905 թ. ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ ռազմաղաշտում կրած խայտառակ պարտությունների պատճառով ցարը ստիպված եղավ օգոստոս ամսին հայտարարել նոր զորակոչ։ Այդ ժամանակ արդեն ժողովուրդը համարձակ արտահայտում էր իր սնրավականություններ կառավարությունից։ Ցարը վախենալով հեղափոխությունից, ստիպված եղավ կնքել խաղաղություն։ Այդ զորակոչի ժամանակ կանչված զինվորները պատերազմի դաշտ չհասած պատերազմը վերջացավ և նրանք վերադարձան տուն։

Այդ զորակոչի առթիվ Մեծ Սալա գյուղում հորինվել է հետևյալ երգը.

3

Աստվածտձնին Լրդուշարթին դխուր լուր
լսվեցավ.
Հայ դղաներուս սրդին մեջը մահվան
ցավ լցվեցավ.
Դանչեցին մեգ-մեդ, մեդ-մեդ, անուններս
կրեցին.
Օդարի լուծը հայ դղայոց նոքա վդին
արեցին։
Մենք հայերս բաղրաստ էինք հայրենիքի
զոհ լինել.
Ոչ թե կնալ ու օդարի լուծը մեր վիզը տնել։
Ձնողներս, դիներս դունը նստած լալիս են.
Ձավադներս նոցա շուրջը բդուդ-բդուդ
կալիս են.
Հարցնում են իրանց մորը. ո՞ւր են մեր
հայրիդները.
Ինչու մեզ իմաց չբդվիք. որ կնայինք
հեգները։
Երբ որ մայրերը լսեցին զդոցը
բահանչները.
Ախ քաշեցին սրդերից, մխիթարեցին
դդոցը։
Պարև գեցիք, մայրիդներս, դուք ողջ էդիք,
հայրիդներս,
Պարև գեցիք, ազգագաններ, սիրելի
պարեզամներ։
Օրհնյալ գեցիք, դուք հայ դյուղեր, որ մեզ
օդնություն դվիք.
Եվ մեր մեղքերը ներելով. լալ-ողբալով
ջամփեցիք։
Մի՛ լաք ձնողներ, մի՛ լաք գիներ, դուցե հեդ
կուկանք.
Դուք մի՛ լաք, դավադներ, շուդով դուն
կուկանք։

Այս երգի հեղինակի անունը մնաց անհայտ, գինվորները ետ դարձան առանց կռիվ անելու։

ԶԻՆՎՈՐ ՄԱՐՏԻՐՈՍ ՔԻՐԵՄԻԹՉՅԱՆԻ ԵՐԳԸ

Մահվան հրեշտադը միշտ անգութ է,
Ատու ձեռին գերանդին որ հասաահաս,
Ջարն ու բարին դախանկ զուդա սև հողին,
Ասա խնթբեմ, ի՞նչ գուդևիր մի դալևդիր
Զինվորից, ա՜խ, դեռահաս ու անմուրազ,
Դու գրգնցիր իր դյանքից։

Մարտիրոսն եմ ես, ազդավ հայ
Քիրեմիթչյան,
Հին տոհմից գինվորական Ռուսաց աղդին,
Եվ Դերպենտյան մեծ ղնդին։
Ձննդավայրս Ռուսաստանը Դոնյան շրջան,
Անհամբեր արդ մեռնում եմ իմ բաբերից
Թողած երկրում սիրամրուր։

Հեռու այնդեղ Նախիջևանում թողի հայր,
մայր.
Քույր, եղբայր, շաղ ընդերներ,
պարեզամներ թողի
Բաշտոն, ամեն պան։ Ա՜խ, ինչ սրդով ես
դուդեի

Գեթ մի անգամ էլ դեսնել. գարոդս առնել.
Դերդս հայդնել. աբա մտնել գերեզման։

Դեռ նոր էի ես հասկացել ազգիս քաղցր
նզաղագ.
Հայրենիքի ցավն զգացել ու գարիքը
անսահման։

Մնաք բարյավ և գուք ազգաց իմ պաշտելի
Ընգերներ, և գու Գևորգ ու Մարտիրոս և
Մարգարէ։

Սիրելիք, երբ գդառնաք, բագմեք ցավս
ամենուն,

Ձնողներիս, անուշ եղբարց, քույրերիս։
Մնաք բարյավ, դաշտեր, ձորեր
Հայաստանի,

Սուրբ լեռներ, մնաք բարյավ եդեմական
Պարզ ու վճիտ աղբյուրներ։

Մարտիրոս Քիրեմիթչյանը երիտասարդ, նոր նախիջևանցի, 1901 թվականին զորակոչվել է բանակ։ Նա ծառայել է Դերբենտյան գնդում, որպես հասարակ զինվոր։ Նրանց դորամասը կանգնած է եղել Ախալցխայում։ 1903 թվականին Մարտիրոսը հիվանդացել մահացել է։ Նրա հետ զինվորական ծառայության մեջ գտնվող նախիջևանցի ընկերները Քիրեմիթչյանի ծնողներին ուղարկել են այս երգը։

ՍԱՄԲԵԿԻ ԴԵՐԱՆ[1]

Այս երգը հորինված է 1942 թվականին։ Հայ գյուղերը գտնվում են Տագանրոգի և Ռոստովի արանքում։ Հայոց հողերի սահմանն է կազմում Սամբեկ գետը։ Գետի հյուսիսային բարձր ափում ամրացած էր թշնամին. ահեղ կռիվներ տեղի ունեցան այդ գետի վրա, խոշոր զոհեր խլեց թշնամին։

Թուփտի. Ջալթր և Փոքր Սալա գյուղերի բնակչությունը անողոքաբար էր արված, դյուղերը կովի դաշտ էին դարձել. այդ գյուղերի բնակչությունը խիստ տուժեց և շատ ընտանիքներ զրկվեցին իրենց զավակներից։

1 Այս երգը մեզ տվել է Օհան Տոմբայաևը։

4

Դասընթացն է դարիք».
Գրաղ ընգա, մարիգս.
Մնաք պարով. ընգերներ,
Հեչ չեղածի բես կնացի։
Սամբեկին գերան կնացինք.
Ալաչ-թալաչ մնացինք.
Ավտոմատով գրուցին.
Հավի խաղակ չըդնսան։
Սև ծին բռիչկաին լաեցին,
Ռոստովի բոլնից հասցուցին.
Մինչև բոլնից հասցուցին.
Հոքիս փորես հանեցին։
Հոնեն ընգանք մեծ ջամփան.
Տեբի կեղի կերեզման.
Ձնողներս թոփ եղան
Ինձի տրին կերեզման։
Մնաք պարով. ձնողներ.
Մնաք պարով. ընգերներ
Մնաս պարով, իմ Ջարթար.
Նայե, ինձի մի՞ մոռնար։

5 ԱՆԲԱԽՏ ԳՈՐԻՑ

Անծանոթ չոլեր ընդաձ,
Գորից մեր անխնգաց.
Օգար երգիր էշթող-չնգող,
Միմիայն ինձի գասին։

Ինձի առին ազդես. դարին,
Կեղիս վրայեն անցուցին,
Հոքիս չառած, փուճ մարմինըս,
Ինձի բաշխեցին։

Օղար երգիր, օղար ըժիշկը
Ինձի նայեցան,
Օղար մարթիր, օղար դղար
Ինձի թաղեցին։

Ինձի առին մեծ օրային դաղր թաղեցին.
Մայրիգ գանչելով, ձայնս խրոձեցավ,
Ձայնիս ձայն չեղավ.
Հողիս դուրս լգավ։

Մնաք պարով, գանչված հայր-մայր,
Իմ քույր և եղբայր,
Ես կնում եմ ստոր կերեզման,
Էլ չեմ դեսնի լուս աշխարհ։